

ՀԱՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գեոլոգիական Գիտությունների Ինստիտուտի առաջին գիտական սեսիան: Սույն թվի ապրիլի 25-ից մինչև 29-ը տեղի ունեցան Գեոլոգիական Գիտությունների Ինստիտուտի անդրանիկ սեսիայի նիստերը: Դրանք նպատակ էին հետապնդում ծանոթացնել ռեսպուբլիկայի Գեոլոգիական շրջաններին և հասարակությանը այն կարևորագույն զործնական արդյունքներին և գիտական ընդհանրացումներին, որոնք ձևոք էր բերել Գեոլոգիական Ինստիտուտը Հայրենական մեծ պատերազմի վերջին տարիներում:

Սեսիան սկսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Կ. Ն. Պաֆեննդլիցի ընդարձակ զեկուցումով, որը հսկայական փաստական մատերիալով և ժամանակակից գիտության նվաճումներին համապատասխան շարադրեց իր պատկերացումները Միջերկրածովյան օրոգեն զոնայում Փոքր Կովկասի ունեցած դիրքի մասին: Զեկուցողը հատկապես նշեց, որ Փոքր Կովկասն ավելի հին ծալքավոր կառուցվածք է, քան Մեծ Կովկասը, որ Փոքր Կովկասի ծալքավոր սխտեմը զեպի արևմուտք մտնում է Անատոլիայի սահմանները, իսկ զեպի արևելք՝ Պամիրի լեռնահանգույցի մեջ: Անդրադառնալով հիշյալ օրոգենի Արաբա-սիրիական և Ստավրոպոլյան վահանների միջև ընկած զոնայի լայնական կտրվածքին, որի մեջ մտնում է նաև Փոքր Կովկասը, Կ. Ն. Պաֆեննդլցը հակադրվեց Վիննայի պրոֆեսոր Լ. Կորեւրին և նշեց, որ նրա հաշվավոր սխեման կիրառելի չէ այդ ստրուկտուրայի մեկնարանման համար: զրա փոխարեն նա առաջարկեց Վան-Բեմմելինի ունդադիոն թեորիան, որն ավելի լրիվ և բազմակողմանիորեն է արտացոլում իրերի իսկական դրությունը:

Հաջորդ զեկուցողը պրոֆ. Գ. Գ. Օգանեզովն էր, որը շարադրեց իր կողմից մշակված և մաթեմատիկական տեսակետից զգալիորեն հիմնավորված գետնեկտոնիկական մի նոր թեորիա, որով նա բացատրեց Արաբատյան գոգավորության ստրուկտուրայի ու ծագման բազմաթիվ մանրամասնությունները՝ հրաբուխների, լճերի, գետային հունների առաջացումը և այլն: Նա գտնում է, որ երկրի կեղևի ստրուկտուրաների առաջացման հիմքում ընկած է այսպես կոչված «հրաբխային զեպրեսիան» (լավաների արտափոխումը ընդերքից և զրանից անմիջականորեն բխող հետեանքները), որն այդ կեղևի չնչին հաստություն պայմաններում հանգեցնում է ուժեղ զեքորմացիաների և հետևաբար նոր լեռնակազմության, ինչպես հրաբխային, նույնպես և ծալքավոր ու զիջյունկտիվ:

Ինչպես սովորաբար լինում է նորածին թեորիաների հետ, պրոֆ. Օգանեզովի թեորիան նույնպես առաջացրեց մի շարք առարկություններ, և նրա առթիվ ծավալվեցին ակտիվ վիճարանություններ:

Հայաստանի Գեոլոգիայի երրորդական շրջանի պատմության մասին բազմաթիվ նոր տվյալներով հանդես եկավ երիտասարդ գիտնական Ա. Հ.

Գաբրիելյանը, որը որոշ լրացումներ և փոփոխութիւններ մտցնելով Կ. Ն. Պաֆենհոլցի առաջադրած ստրատիգրաֆիայի մեջ և ապա կատարելով մի շարք ստրատիգրաֆիական զուգադրութիւններ, գտնում է, որ Հայաստանի ստրուկտուրան հիմնականում ձևավորվել է ոչ թե տեկտոգեննեզի պիրենեյան ֆազում, այլ ատտիկական ֆազում, որ ռեպուլքիկայի ինտրուզիաների մեծ մասը, որոնց հետ են կապված մետաղական օգտակար հանածոների զգալի պաշարները, առաջացել են հենց այդ ժամանակ և որ Հայաստանն իրենց տակ առնող մինչև այժմ օլիգոցենյան կոչվող անդեզիտա-բազալտային լավաների զրահն ունի պլիոցենյան հասակ:

Ստրատիգրաֆիայի հարցերին էր վերաբերում նաև գիտ. թեկնածու Հ. Ս. Ստեփանյանի զեկուցումը: Նա իր զեկուցման մեջ կանգ առավ Ալաւիերդու հանքաբեր շրջանի ստրատիգրաֆիայի հարցի վրա և նշեց զրա կարեւորութիւնը հանքավայրի հեռանկարները լայնացնելու գործում: Իր կատարած աշխատանքների հետևանքով նա գալիս է այն եզրակացութեան, որ Ալաւալայի կվարցային պորֆիրների հաստվածքը ավելի երիտասարդ է, քան Ալաւերդու շրջանի «ստորին պորֆիրիտները», որ հանքաբերութեան տեսակետից ավելի հուսալի են միջին յուրայի պորֆիրիտների վրա տեղադրված թթու լավաներն ու մանիշակագույն տուֆերը:

Չափազանց ակտուալ հարցի էր նվիրված ավագ գիտ. աշխատող Գ. Պ. Բաղդատուրյանի՝ հետաքրքրական զեկուցումը՝ նվիրված Փամբակի լեռնաշղթայի նեֆելինային սիենիտների՝ ինտրուզիայի ուսումնասիրութեանը և նրանից ալումինիումի հանքանյութ ստանալու հնարավորութիւններին: Նա ցույց տվեց, որ այդ ինտրուզիայի սահմաններում գտնվում են նիֆելինով հարուստ 3 հզոր զոնաներ, որոնք տեսականորեն կարող են տալ ալումինիումի օքսիդի հսկայական պաշարներ: Անդրադառնալով այդ ապառնիւրի ծագման պրոբլեմատիկային, նա նշեց, որ զրանք առաջացել են մի ընդհանուր ալկալային մագմայի ներլուծումից, իսկ նրանց պերիֆերիալում գտնվող պսեդոլյոյցիտային ու պեգմատոիդ դայկաներն առաջացել են ավելի խորը գտնվող մնացորդային մագմայից:

Նեֆելինային սիենիտներից ալումինիում ստանալու հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Քիմիական Ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Մ. Գ. Մանվելյանը, որը նշեց, թե Հայաստանում էժան էլեկտրոէներգիայի առկայութեան պայմաններում կարելի է Ախտայի և Մեղրու շրջանի նեֆելինային սիենիտների խոշոր կուտակումներից շահավետ կերպով ստանալ երկրին խիստ անհրաժեշտ այդ մետաղը: Հենվելով փորձնական ավալների վրա՝ զեկուցողը ցույց տվեց, որ մեկ տոննա ալումինիումի օքսիդ ստանալու համար պահանջվում է 5,95 տոննա նեֆելինով հարուստ սիենիտի 10,8 տոննա կրաքար, ըստ որում արդյունքում ստացվում է նաև 0,9 տոննա սոդա, 4,5 տոննա ածխածին զառ և ցեմենտ ստանալու համար պիտանի 11 տոննա շլամ:

Գիտ. թեկնածու Յու. Ա. Արապովը զեկուցեց Ղափանի հանքավայրի մասին և պարզաբանեց նրանց ստրուկտուրայի ու զեննդիսի մի շարք օրինաչափութիւնները: Նա մասնավորապես նշեց, որ հանքավայրի շրջանի խոշոր տեկտոնական խախտումները, ինչպես այդ ապացուցել է Ա. Ն. Քաչաթյանը, ոչ թե հանքաբեր ուղիներ են հանդիսացել, այլ ընդհակառակը, սահմանափակել են այլ մանր ճեղքվածքներով՝ բարձրացած հանքաբեր

լուծույթներին շարժումը գեպի հեռուները և հանգեցրել են հանքերի լուծալիզացիային հենց այն ճեղքվածքների մեջ, որոնցով բարձրացել են լուծույթները: Զեկուցման մեջ հետաքրքրական էր նաև այն հանգամանքը, որ հանքային միներալներն ունեն կոլլոիդոֆ սարուկաուրա և հալանաբար առաջացել են կոլլոիդալ բնույթի հանքաքեր լուծույթներից: Զեկուցողը գտնում է, որ Ղափանի հանքավայրը մեծ հեռանկարներ ունի և կարոտ է միայն լայն հետախուզման:

Ունկնդիրները մեծ հետաքրքրություն ցուցին գիտ. թեկնածու Հ. Գ. Մաղադյանի զեկուցումը Հյուսիսային Հայաստանի երկաթի և մարգանցի հանքերի մասին: Նա նշեց, որ Նոյեմբերյանի շրջանի մոռացության մատնեղած երկաթահանքերը մեծ պաշարներ ունեն և կարող են ծառայել իբրև հումք թրիլիսիում կառուցվող մետալուրգիական կոմբինատի համար, ուստի անհրաժեշտ է կազմակերպել նրանց մաքնիտոմետրիական հետախուզությունը: Ինչ վերաբերում է այդ հանքերի առաջացմանը, ապա Հ. Գ. Մաղադյանը նշում է, որ դրանք կապված են երրորդական հասակի թթու ինտրուզիաների հետ և ձևավորվել են հիպոթերմալ պայմաններում:

Սոսեյով մարգանցի հանքերի մասին, նաև նշում է, որ իրենց որակով և պաշարով արժեքավոր են Իջևանի շրջանի Սուխոլուզի հանքերը, որոնք կարող են ֆիսիկական արդյունաբերության համար հումք ծառայել: Ըստ ծաղման դրանք պատկանում են հանքերի տեկթերմալ խմբին:

Սեսիայի ծրագրերն ավարտվեց ավագ գիտ. աշխատող Ս. Պ. Դեմյոսիևի զեկուցումով, որն իր զեկուցման մեջ ցայտուն կերպով վեր հանեց այն օրինաչափությունները, որոնց ենթակա են Հայաստանի հանքային ջրերը: Հատկապես ուշադրության արժանի են այն հանգամանքները, որ այդ ջրերի ելքերը զուգադիպում են տեկտոնական խոշոր էլեմենտներին և մեծ մասամբ ինտրուզիվ զանգվածներին. ըստ քիմիզմի նրանք բոլորն էլ զեկուցողի կողմից հիմնականում դասվում են հիդրոկարբոնատային տիպին, իսկ ըստ տեմպերատուրայի մեծ մասամբ սառը տիպին և ապա որոշ փոքր խմբեր սուլֆերմալ, թերմալ և հիպոթերմալ տեմպերին: Սոսեյով այդ ջրերի ռադիոակտիվության մասին, նա գտնում է, որ այդպիսիներն իբրև կանոն կապված են պալեոգոյան ֆորմացիայի նստվածքների հետ:

Ամփոփելով իր մտքերը՝ ընկ. Ս. Պ. Դեմյոսիևը նշում է, որ Հայաստանը հանքային աղբյուրների առատ երկիր է, և այդ աղբյուրներն ունեն խոշոր բաժնեկողիական նշանակություն, ուստի նա գտնում է, որ այդ ջրերի հետազոտությունը առաջիկայում պետք է բաղմանկողմանիորեն ընդարձակել:

Սեսիայի վերջում արտահայտվեցին ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամներ Նիկողոսյանը, Պաֆենհոյցը և ուրիշները, որոնք նշեցին սեսիայի հաջող ընթացքը և զեկուցումներին մեծ ղետական և պրակտիկ արդյունքներ: